Հաստատված է
ՀՀ կրթության տեսչական մարմնի
կառավարման խորհրդի
2018 թ. հուլիսի 3-ի նիստում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

# ԾՐԱԳԻՐ
# 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

## Բովանդակություն


I. Ներածություն _____ 2

II. Տեսչական մարմնի նպատակները _____ 2

III. Միջոցառումները, թիրախները, ակնկալվող արդյունքները _____ 2

IV. Գործունեության միջոցառումների ծրագիրը _____ 6

V. Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ծրագիրը

(հավելվածներ 1, 2) _____ 12

## I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) 2018 թվականի տարեկան գործունեության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մշակման համար հիմք են հանդիսացել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N729-Լ որոշմամբ հաստատված Տեսչական մարմնի կանոնադրության դրույթները և այլ իրավական ակտեր:

Տեսչական մարմինը իրականացնում է տնտեսավարող սուբյեկտների կողմից (նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական և միջին մասնագիտական կրթության բնագավառում ՀՀ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողություն՝ իր վերահսկման ոլորտներում հնարավոր խախտումները կանխելու և հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով:

Ծրագիրը ներառում է Տեսչական մարմնի նպատակները, Տեսչական մարմնի կողմից վերահսկվող ոլորտներում թիրախները, նախատեսվող միջոցառումները, դրանց իրականացման ժամանակացույցը և ակնկալվող արդյունքը:

## II. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Տեսչական մարմնի նպատակներն են՝

1. ստուգվող ուսումնական հաստատություններում՝

   1) սովորողների կամ երեխաների կրթական իրավունքի պետական երաշխիքների, կրթության որակի բարձրացմանը, կրթական ծրագրերի յուրացմանը, պետական կրթական չափորոշիչների պահանջների կատարմանը աջակցելը.

   2) կրթական քաղաքականության իրականացման ու կրթական գործընթացի արդյունավետության գնահատումը, հետադարձ կապի ապահովումը.

2. հնարավոր խախտումները կանխելու նպատակով վերահսկման ոլորտում իրազեկվածության բարձրացմանը նպաստելը:

## III. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ, ԹԻՐԱԽՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրով նախատեսված է ՀՀ Վայոց ձորի, ՀՀ Կոտայքի մարզպետարանների կրթության, մշակույթի և սպորտի վարչություններում, ՀՀ Արարատի մարզի Մասիսի, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի, ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի, ՀՀ Տավուշի մարզի Իջևանի համայնքապետարանների կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում վերահսկողության իրականացում:

Ծրագրում ընդգրկված է վերահսկման ենթակա 4 ոլորտների 75 ուսումնական հաստատություն:

Տեսչական մարմնի կողմից Ծրագրում ընդգրկված ուսումնական հաստատություններում ստուգումներ կիրականացվեն III-IV եռամսյակներում՝ ստուգաթերթերը սահմանված կարգով հաստատվելուց հետո:

2018 թվականին իրականացվելու են հետևյալ հիմնական միջոցառումները՝

1. **<u>նախադպրոցական կրթության ոլորտում</u>** ստուգումներ են իրականացվելու թվով 45 նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (ՆՈՒՀ) (Երևանի Աջափնյակ, Դավթաշեն վարչական շրջանների, ՀՀ Արարատի մարզի Մասիս, Նոր Խարբերդ, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր, Փարաքար, ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան, ՀՀ Տավուշի մարզի Իջևան, ՀՀ Կոտայքի մարզի Քասախ, Զովունի, Նոր Հաճն, Պռոշյան, ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ համայնքների ՆՈՒՀ-եր):

Այս ոլորտում թիրախային են համարվել այն ՆՈՒՀ-երը, որտեղ Կրթության պետական տեսչության կողմից ստուգում կամ ուսումնասիրություն իրականացվել է մինչև 2012 թվականը:

Ստուգումների արդյունքում ակնկալվում է ՆՈՒՀ-երի կրթական գործունեության բարելավում առնվազն 30%-ով.

2. **<u>միջնակարգ կրթության ոլորտում</u>** ստուգումներ են իրականացվելու թվով 19 հանրակրթական ուսումնական հաստատություններում (դպրոց) (ՀՀ Վայոց ձորի մարզի թվով 15, ՀՀ Արարատի մարզի թվով 1, Երևան քաղաքի թվով 3 դպրոցներ): Այս ոլորտում ընտրված ուսումնական հաստատությունները բաժանվում են 4 թիրախային խմբի: **Առաջին խմբի համար** թիրախայնության բնութագրիչ է հանդիսացել 50-100 սովորող ունենալը, **երկրորդ խմբի համար՝** 100-200 սովորող ունենալը (ի դեպ՝ այս դպրոցներում Կրթության պետական տեսչության կողմից կրթական գործընթացի ստուգում կամ ուսումնասիրություն չի իրականացվել), **երրորդ խմբի համար**՝ Կրթության պետական տեսչության կողմից իրականացված կրթական գործընթացի ուսումնասիրության արդյունքում ցածր ցուցանիշներ ունենալը, **չորրորդ խմբի համար՝** վերջին երեք տարիների ընթացքում ստացված դիմում-բողոքների թիվը:

Ստուգումների արդյունքում ակնկալվում է դպրոցների կրթական գործունեության բարելավում առնվազն 30%-ով.

3. **<u>միջին մասնագիտական կրթության ոլորտում</u>** ստուգումներ են իրականացվելու թվով 6 միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում: Այս ոլորտում թիրախային են համարվել այն հաստատությունները, որոնց վերաբերյալ 2018 թվականին Տեսչական մարմնում ստացվել են դիմում-բողոքներ.

4. **<u>նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ոլորտում</u>** ստուգումներ են իրականացվելու թվով 5 նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններում: Թիրախայնության բնութագրիչ է հանդիսացել այն հանգամանքը, որ Կրթության պետական տեսչության կողմից վերջին 5 տարիների ընթացքում այդ հաստատություններում ստուգում (տեսչավորում) չի իրականացվել:

Ստուգումների արդյունքում ակնկալվում է ուսումնական հաստատություններում կրթական գործունեության բարելավում առնվազն 30%-ով.

**5.** ՀՀ մարզպետարանների աշխատակազմերի կրթության, մշակույթի և սպորտի վարչություններում վերահսկողության իրականացում (ՀՀ Վայոց ձորի, ՀՀ Կոտայքի մարզպետարաններ): Մարզպետարանների աշխատակազմերի կրթության, մշակույթի և սպորտի վարչություններում վերահսկողական գործընթաց իրականացվում է երեք տարին մեկ անգամ պարբերականությամբ (ՀՀ Կոտայքի մարզպետարանում վերջին վերահսկողական գործընթացն իրականացվել է 2014թ-ին, իսկ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում՝ 2015թ-ին).

**6.** համայնքապետարանների աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում վերահսկողության իրականացում (ՀՀ Արարատի մարզի Մասիսի, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի, ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի, ՀՀ Տավուշի մարզի Իջևանի համայնքապետարաններ):

Ստուգումների ժամանակացույցում նախադպրոցական կրթության ոլորտից թիրախային են համարվել նշված համայնքների ՆՈՒՀ-երը, ուստի ստուգումների արդյունքների ամբողջականությունն ապահովելու նպատակով վերահսկողական գործառույթներ են նախատեսվել նաև նշված քաղաքների քաղաքապետարանների աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում: Վերահսկողական գործընթացի արդյունքում ակնկալվում է ուսումնական հաստատություններում կրթական գործունեության բարելավում առնվազն 30%-ով.

**7. ռիսկերի գնահատում՝** Տեսչական մարմնի կողմից 2018թ. ընթացքում իրականացված ստուգումների արդյունքներով պայմանավորված ռիսկերի կառավարում.

**8. կրթական ծառայությունների արդյունավետության գնահատում՝** Տեսչական մարմնի կողմից 2018թ. ընթացքում իրականացված ստուգումների արդյունքում.

**9. Տեսչական մարմնի բնականոն գործունեության համար անհրաժեշտ՝ օրենսդրությամբ սահմանված իրավական ակտերի մշակում, առկա խնդիրների բացահայտում և համապատասխան առաջարկությունների ներկայացում,** մասնավորապես.

1) ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության և ստուգաթերթերի լրամշակում,

2) որակի ապահովման ստորաբաժանման գործունեության տարեկան ծրագրի կազմում,

3) ներքին կարգապահական կանոնների մշակում և ներդրում,

4) կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ծրագրի կազմում,

5) ՀՀ կառավարության 18.06.2015թ. N 711-Ն որոշմամբ հաստատված օրինակելի կարգի հիման վրա՝ բողոքների ընդունման և հետագա ընթացք տալու կարգի տեղայնացում (մշակում),

6) ստուգումների ընթացքում ուսումնական հաստատությունների կրթական գործունեության (ըստ առանձին բնութագրիչների և ընդհանուր) արդյունավետության գնահատման ձևաթղթերի նախագծերի մշակում և հաստատման ներկայացում.

**10. վերահսկողական գործընթացի արդյունքում բացահայտված խախտումների հետևանքների և թերությունների վերացման նպատակով ներկայացված հանձնարարականների և առաջարկությունների կատարման նկատմամբ վերահսկողություն (հետադարձ կապ).**

**11. անձնակազմի կարողությունների զարգացում՝** համագործակցելով շահագրգիռ կառույցների հետ՝ դասընթացների կազմակերպում (ամիսը մեկ անգամ).

**12. Տեսչական մարմնի վերահսկման ոլորտներում կրթության բնագավառը կարգավորող իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացում, խորհրդատվության տրամադրում.**

**13. Դիմումներին (բողոքներին) արձագանքում:**

## IV. 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

| N | Միջոցառման անվանումը | Աշխատանքի նպատակը | Կատարողը | Համակատարողը | Ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | Ստուգումներ Երևանի Աջափնյակ, Դավթաշեն վարչական շրջանների, ՀՀ Արարատի մարզի Մասիս, Նոր Խարբերդ, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր, Փարաքար, ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան, ՀՀ Տավուշի մարզի Իջևան, ՀՀ Կոտայքի մարզի Ձովունի, Նոր Հաճն, Պռոշյան, Քասախ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ համայնքների թվով 45 նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում | ՀՀ կրթության տեսչական մարմնի կանոնադրության 10-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների կատարում | Հանրակրթության վարչություն (ՀՎ) | Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչություն (ՌԳՍՊՎԳՎ), Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն (ՆՄՄԿՎ) | III-IV եռամսյակներ |
| 2. | Ստուգումներ ՀՀ Վայոց ձորի մարզի թվով 15, ՀՀ Արարատի մարզի թվով 1, Երևան քաղաքի թվով 3 հանրակրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում | ՀՀ կրթության տեսչական մարմնի կանոնադրության 10-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների կատարում | ՀՎ | ՌԳՍՊՎԳՎ, ՆՄՄԿՎ | III-IV եռամսյակներ |
| 3. | Ստուգումներ թվով 5 նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններում | ՀՀ կրթության տեսչական մարմնի կանոնադրության 10-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների կատարում | ՆՄՄԿՎ | ՌԳՍՊՎԳՎ, ՀՎ | III-IV եռամսյակներ |
| 4. | Ստուգումներ թվով 6 միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում | ՀՀ կրթության տեսչական մարմնի կանոնադրության 10-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների կատարում | ՆՄՄԿՎ | ՌԳՍՊՎԳՎ, ՀՎ | III-IV եռամսյակներ |
| 5. | Վերահսկողություն ՀՀ Վայոց ձորի, ՀՀ Կոտայքի մարզպետարանների աշխատակազմերի կրթության, մշակույթի և սպորտի վարչություններում | ՀՀ կրթության տեսչական մարմնի կանոնադրության 10-րդ կետի 15-րդ ենթակետի պահանջների կատարում | ՀՎ | ՌԳՍՊՎԳՎ, ՆՄՄԿՎ | III-IV եռամսյակներ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| **6.** | Վերահսկողություն ՀՀ Արարատի մարզի Մասիսի, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի, ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի, ՀՀ Տավուշի մարզի Իջևանի համայնքապետարանների կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում | ՀՀ կրթության տեսչական մարմնի կանոնադրության 10-րդ կետի 15-րդ ենթակետի պահանջների կատարում | ՀՎ | ՌԳՍՊՎԳՎ | III-IV եռամսյակներ |
| **7.** | Վերահսկողական գործընթացի արդյունքների հիման վրա հանրակրթական (այդ թվում՝ նախադպրոցական), նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների կրթական գործունեության ռիսկերի գնահատում | «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ, ՀՀ կրթության տեսչական մարմնի կանոնադրության 10-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջների կատարում | ՌԳՍՊՎԳՎ | ՀՎ, ՆՄՄԿՎ | Պարբերաբար |
| **8.** | Կրթական ծառայությունների արդյունավետության գնահատում, վերլուծություն, զարգացմանը նպաստող առաջարկությունների ներկայացում | ՀՀ կրթության տեսչական մարմնի կանոնադրության 10-րդ կետի 13-րդ ենթակետի պահանջների կատարում | ՌԳՍՊՎԳՎ | ՀՎ, ՆՄՄԿՎ, Հանրության հետ տարվող աշխատանքների բաժին (ՀՏԱԲ) | Պարբերաբար |
| **9.** | Վերահսկողական գործընթացի արդյունքում բացահայտված խախտումների հետևանքների և թերությունների վերացման նպատակով ներկայացված հանձնարարականների և առաջարկությունների կատարման նկատմամբ վերահսկողություն (հետադարձ կապ), մեթոդական օգնություն | ՀՀ կրթության տեսչական մարմնի կանոնադրության 10-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջների կատարում | ՌԳՍՊՎԳՎ | ՀՎ, ՆՄՄԿՎ, Իրավական աջակցության և փաստաշրջանառութ. բաժին (ԻԱՓԲ) | Պարբերաբար |
| **10.** | Ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության և ստուգաթերթերի լրամշակում և հաստատման ներկայացում | Տեսչական մարմնի բնականոն գործունեության համար անհրաժեշտ՝ օրենսդրությամբ սահմանված իրավական ակտերի մշակում | ՌԳՍՊՎԳՎ | ՀՎ, ՆՄՄԿՎ, ԻԱՓԲ | III եռամսյակ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| **11.** | Որակի ապահովման ստորաբաժանման գործունեության տարեկան ծրագրի կազմում և ներկայացում խորհուրդ | Տեսչական մարմնի բնականոն գործունեության համար անհրաժեշտ՝ օրենսդրությամբ սահմանված իրավական ակտերի մշակում | Որակի ապահովման բաժին (ՈԱԲ) | - | III եռամսյակ |
| **12.** | Ներքին կարգապահական կանոնների մշակում | Տեսչական մարմնի բնականոն գործունեության համար անհրաժեշտ՝ օրենսդրությամբ սահմանված իրավական ակտերի մշակում | ՈԱԲ | - | Տարվա ընթացքում |
| **13.** | Ներքին կարգապահական կանոնների և էթիկայի կանոնների պահպանման վերաբերյալ վերլուծության ներկայացում խորհրդին | «Տեսչական մարմինների որակի ապահովման ստորաբաժանումների կազմակերպման և գործունեության կարգի» 12-րդ կետի պահանջի կատարում | ՈԱԲ | - | Յուրաքանչյուր եռամսյակ |
| **14.** | Տեսչական մարմնի, նրա ծառայողների գործողությունների կամ անգործության կամ նրա կողմից ընդունված իրավական ակտերի վերաբերյալ ստացված բողոքների ուսումնասիրում, թերությունների վերհանում և դրանց հիման վրա կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակում և ներկայացում խորհուրդ | «Տեսչական մարմինների որակի ապահովման ստորաբաժանումների կազմակերպման և գործունեության կարգի» 14-րդ կետի պահանջի կատարում | ՈԱԲ | - | Յուրաքանչյուր եռամսյակ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| **15.** | ԿՏՄ կայքէջում վերլուծությունների հրապարակում՝<br>1) ԿՏՄ ծառայողների տրամադրած խորհրդատվության օգտակարության արձագանքների<br>2) ստուգաթերթերի՝ որպես պահանջներին համապատասխանությանը նպաստող գործիքի արդյունավետության վերաբերյալ արձագանքների | «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների կատարում | ՈԱԲ | ՀՏԱԲ | Պարբերաբար |
| **16.** | Ռիսկերի բացահայտման նպատակով ԿՏՄ ստորաբաժանումներում ուսումնասիրությունների իրականացում և ԿՏՄ գործունեության արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ ներառող հաշվետվությունների կազմում | «Տեսչական մարմինների որակի ապահովման ստորաբաժանումների կազմակերպման և գործունեության կարգի» 6-րդ, 16-18-րդ կետերի պահանջի կատարում | ՈԱԲ | ՀՏԱԲ | Յուրաքանչյուր եռամսյակ |
| **17.** | ԿՏՄ գործունեության կատարողականի գնահատում և ներկայացում խորհուրդ | «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների կատարում | ՈԱԲ | - | Յուրաքանչյուր եռամսյակ |
| **18.** | Ստուգման ենթարկված սուբյեկտների բավարարվածության աստիճանի վերլուծություն՝ տեսչական մարմնի աշխատանքների անաչառության, ընթացակարգերի թափանցիկության, տրամադրված տեղեկատվության որակի և տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժության վերաբերյալ տարբեր գործիքների մշակման և կիրարկման միջոցով | ՀՀ կառավարության 25.06.2015թ. N693-Ն որոշմամբ հաստատված «Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը» հավելվածի 12-րդ կետի 5-րդ ենթակետ | ՈԱԲ | ՀՏԱԲ | Յուրաքանչյուր եռամսյակ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| **19.** | Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ծրագրի կազմում և Խորհրդի հաստատմանը ներկայացում | Տեսչական մարմնի բնականոն գործունեության համար անհրաժեշտ՝ օրենսդրությամբ սահմանված իրավական ակտերի մշակում | ՀՏԱԲ | ԻԱՓԲ | III եռամսյակի 1-ին հնգօրյակ |
| **20.** | ՀՀ կառավարության 18.06.2015թ. N 711-Ն որոշմամբ հաստատված բողոքների ընդունման և հետագա ընթացք տալու մասին օրինակելի կարգի տեղայնացում | Տեսչական մարմնի բնականոն գործունեության համար անհրաժեշտ՝ օրենսդրությամբ սահմանված իրավական ակտերի մշակում | ԻԱՓԲ | ՀՏԱԲ | III եռամսյակ |
| **21.** | Ստուգումների ընթացքում գործածվող ուսումնական հաստատությունների կրթական ծառայությունների արդյունավետության գնահատման ձևաթղթերի նախագծերի մշակում, հաստատման ներկայացում | Տեսչական մարմնի բնականոն գործունեության համար անհրաժեշտ՝ օրենսդրությամբ սահմանված իրավական ակտերի մշակում | ՌԳՍՊՎԳՎ | ՀՎ, ՆՄՄԿՎ, ՀՏԱԲ | III եռամսյակ |
| **22.** | Տեսչական մարմնի վերահսկման ոլորտների ուսումնական հաստատությունների վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքում և վերլուծություն, վերահսկողական ու հսկողական գործառույթների նպատակադրում դեպի առավել ռիսկային ոլորտներն ու ուսումնական հաստատությունները | Առավել ռիսկային ուսումնական հաստատությունների բացահայտում, հաշվետվության, տեղեկանքի կամ վերլուծության կազմում | ՌԳՍՊՎԳՎ | ՀՏԱԲ | Յուրաքանչյուր գործընթացի ավարտից հետո 30 օրվա ընթացքում |
| **23.** | Անձնակազմի կարողությունների զարգացում՝ համագործակցելով շահագրգիռ կառույցների հետ | Դասընթացների կազմակերպում՝ աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով | Կառուցվածքային ստորաբաժա-նումներ | - | Յուրաքանչյուր ամիս |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| **24.** | Տեսչական մարմնի վերահսկման ոլորտներում կրթության բնագավառը կարգավորող իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների, խորհրդատվության իրականացում | «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջների կատարում | ՀՎ, ՆՄՄԿՎ, ԻԱՓԲ | ՀՏԱԲ | Յուրաքանչյուր ամիս |
| **25.** | Դիմումներին (բողոքներին) արձագանքում | Դիմումներում (բողոքներում) բարձրացված փաստարկների ուսումնասիրություն (ստուգում), ստացված տեղեկատվության վիճակագրության վարում և հաշվետվությունը խորհրդին ներկայացում | ՀՎ, ՆՄՄԿՎ, ՌԳՍՊՎԳՎ | ԻԱՓԲ | Ըստ անհրաժեշտ. (հաշվետվու-թյունը՝ յուրաք. կիսամյակի ավարտին հաջորդող 20 օրվա ընթացքում) |
| **26.** | Օրենքով չարգելված տեղեկատվության փոխանակում այլ տեսչական մարմինների հետ | ՀՀ կրթության տեսչական մարմնի կանոնադրության 10-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջների կատարում | ՌԳՍՊՎԳՎ | Կառուցվածքային ստորաբաժանումներ | Պարբերաբար |
| **27.** | ԿՏՄ անձնական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվության կառավարում և հրապարակում կայքէջում | ՀՀ կրթության տեսչական մարմնի կանոնադրության 10-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջների կատարում | ՌԳՍՊՎԳՎ | ՀՏԱԲ | IV եռամսյակ |
| **28.** | Տեսչական մարմնի կողմից 2019թ. իրականացվելիք ստուգումների տարեկան ծրագրի կազմում և հրապարակում | Տեսչական մարմնի կողմից 2019թ. իրականացվելիք ստուգումների տարեկան ծրագրի տեղադրում Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջում, աշխատանքային ռեսուրսների պլանավորում | ՌԳՍՊՎԳՎ | ՀՎ, ՆՄՄԿՎ, ՀՏԱԲ | մինչև դեկտեմբերի 1-ը |
| **29.** | **Ընթացիկ աշխատանքներ** | | Կառուցվածքային ստորաբաժանումներ | | Պարբերաբար |

## V. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| N | Գործողություն | Արդյունք | Ժամկետ | Կատարող, համա-կատարող | Գնահատման չափանիշ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Ըստ Տեսչական մարմնի 2018թ. գործունեության տարեկան ծրագրի՝ կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների 2018թ. կիսամյակային ծրագրի և ժամանակացույցների կազմում | Տեսչական մարմնի՝ ՋԼՄ-ների և հանրության հետ կապերի ուղղությամբ գործունեության հստակեցում և համակարգում | III եռամսյակի 1-ին հնգօրյակ | ՀՏԱԲ, ՀՎ, ՆՄՄԿՎ | Ծրագիր, ժամանակացույցներ (հավելած 1, հավելված 2) |
| 2. | Ըստ Տեսչական մարմնի ստու-գումների տարեկան ծրագրի՝ ստուգումների նպատակների, խնդիրների և արդյունքների լուսաբանում՝ տարբեր ձևաչափերով | Հանրության իրազեկվածության և իրենց իրավունքների մասին տեղեկացվածության մակարդակի բարձրացում, հնարավոր խախտումների կանխարգելում | III-IV եռամսյակ | ՀՏԱԲ | Մամուլի առնվազն երկու հաղորդագրու-թյուն, եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվություններ, որոնք հրապարակվել և տարածվել են ոչ միայն Տեսչական մարմնի սոցիալական էջերում, այլև ՋԼՄ-ներում, հարցազրույցներ Տեսչական մարմնի ղեկավար կազմի հետ՝ տարբեր թեմաներով, այլ ելույթներ և մեկնաբանություններ՝ ըստ անհրաժեշտության |
| 3. | Տեսչական մարմնի կայքի ստեղծում, տարբերանշանի (լոգոյի) մշակում և տարածում, պաստառի (բաների) տպագրություն | Տեսչական մարմնի անհատականացման միջոցների ապահովում և ճանաչելիության խթանում հանրության շրջանում | III-IV եռամսյակ | ՀՏԱԲ | Տեսչական մարմնի պաշտոնական կայքի, տարբերանշանի (լոգոյի) տարածում սոցիալական էջերի և ՋԼՄ-ների միջոցով |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **4.** | Տեսչական մարմնի կայքի և սոցիալական մեդիայի էջերի բովանդակային սպասարկում և զարգացում | Տեսչական մարմնի գործունեության թափանցիկության ապահովում, հանրության լայն շրջանակների իրազեկում ժամանակակից մեդիա միջոցների կիրառմամբ | III եռամսյակ | ՀՏԱԲ | Կայքի և սոցիալական մեդիաէջերի բովանդակության պարբերական թարմացում, աշխատանքային ծրագրերի, ստուգումների արդյունքների մասին հաշվետվությունների, ժամանակացույցների տեղադրում |
| **5.** | Թեժ գծի հեռախոսազանգերի, ստացված դիմումների հիմնական թեմայի վերաբերյալ՝ խորհրդատվական նյութերի պատրաստում և տարածում | ԶԼՄ-ների ներկայացուցիչներին՝ ոլորտը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, Տեսչական մարմնի հանդեպ վստահության ձևավորում | III-IV եռամսյակներ | ՀՏԱԲ, ՀՎ, ՆՄՄԿՎ | Տեղեկատվական թերթիկների տրամադրում հանրության լայն շրջանակին, առնվազն երկու թվային հաշվետվություն՝ թեժ գծով ստացվող ահազանգերի և հանդիպումների մասին (յուրաքանչյուր եռամսյակի ավարտին) |
| **6.** | Իրազեկում-հանդիպումների կազմակերպում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և ավագ դպրոցների սովորողների և նրանց ծնողների հետ | Խնդիրների վերհանում, քարոզչական նպատակաուղղում և իրազեկում՝ ԶԼՄ-ներով առավել շատ անդրադարձ գտած արխիվացված նյութերի, հաշվետվությունների միջոցով | IV եռամսյակ | ՀՏԱԲ, ՀՎ, ՆՄՄԿՎ | Մեդիա նյութերի արխիվ, առնվազն երկու հանդիպումների վերաբերյալ հաշվետվություններ, դրանց լուսաբանում մարմնի առցանց աղբյուրներով և (կամ) ԶԼՄ-ներով (ըստ հավելվածներ 1-ի և 2-ի) |
| **7.** | Միջազգային կազմակերպություն-ների, տեղական ՀԿ-ների հետ հանդիպումներ | Հանրության ավելի ակտիվ խավի իրազեկում, իրավագիտակցության բարձրացում, ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվության ստացում | III-IV եռամսյակներ | ՀՏԱԲ | Առնվազն երկու հանդիպում՝ դրանց լուսա-բանում մարմնի առցանց աղբյուրներով և ԶԼՄ-ներով |

**Հավելված 1**

**ՀՀ կրթության տեսչական մարմնի հանրակրթության վարչության**
**2018 թվականի խորհրդատվական գործառույթների ժամանակացույց**

| N | Տնտեսավարող սուբյեկտի անվանումը | Գտնվելու վայրը | Հանդիպման ժամկետը |
|---|---|---|---|
| | **Երևան** | | |
| 1. | Նախադպրոցական ուսումնական հաստատություններ | Երևան | Հուլիսի 3-րդ տասնօրյակ |
| 2. | Ավագ դպրոցների սովորողների և նրանց ծնողների հետ հանդիպում | Երևան | Հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| | **Վայոց Ձոր** | | |
| 3. | Հանրակրթական ուսումնական հաստատություններ | Եղեգնաձոր | Օգոստոսի 2-3-րդ տասնօրյակներ |
| | **Տավուշի մարզ** | | |
| 4. | Նախադպրոցական ուսումնական հաստատություններ | Իջևանի համայնք | Սեպտեմբերի 1-ին տասնօրյակ |
| | **Լոռու մարզ** | | |
| 5. | Նախադպրոցական ուսումնական հաստատություններ | Ստեփանավանի համայնք | Սեպտեմբերի 1-2-րդ տասնօրյակներ |
| | **Արարատի մարզ** | | |
| 6. | Նախադպրոցական ուսումնական հաստատություններ | Մասիս | Հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| | **Արմավիրի մարզ** | | |
| 7. | Նախադպրոցական ուսումնական հաստատություններ | Մեծամոր | Հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| | **Կոտայքի մարզ** | | |
| 8 | Հանրակրթական ուսումնական հաստատություններ | Կոտայքի մարզպետարան | Նոյեմբերի 1-ին տասնօրյակ |

**Հավելված 2**

**ՀՀ կրթության տեսչական մարմնի նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության 2018 թվականի խորհրդատվական գործառույթների ժամանակացույց**

| N | Տնտեսավարող սուբյեկտի անվանումը | Գտնվելու վայրը | Հանդիպման ժամկետը |
|---|---|---|---|
| **Երևան** | | | |
| **1.** | Երևանի թիվ 9 արհեստագործական պետական ուսումնարան | ք. Երևան, Վարդաշեն 66, | Օգոստոս 28 |
| **2.** | Երևանի Ռ. Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ | ք. Երևան, Մաշտոցի 11 | |
| **3.** | Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ | ք. Երևան, Արշակունյաց 39 | |
| **4.** | Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ | ք. Երևան, Մոլդովական 37ա | |
| **ՀՀ Տավուշի մարզ** | | | |
| **5.** | Դիլիջանի պետական քոլեջ | ք. Դիլիջան, Ուսանողական 70 | Օգոստոս 6-7 |
| **6.** | Նոյեմբերյանի պետական քոլեջ | ք. Նոյեմբերյան, Շիրազի 1 | |
| **ՀՀ Լոռու մարզ** | | | |
| **7.** | Ալավերդու արհեստագործական պետական ուսումնարան | Ք.Ալավերդի, Մարտի 8-ի փող, 2-րդ շենք | Օգոստոս 7-8 |
| **ՀՀ Շիրակի մարզ** | | | |
| **8.** | Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան | ք. Գյումրի, Թամանյան 2 | Օգոստոս 13-14 |
| **9.** | Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ | ք. Գյումրի, Մանուշյան 4-րդ թաղամաս, թիվ 30 | |
| **ՀՀ Սյունիքի մարզ** | | | |
| **10.** | Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան | Ք. Քաջարան, Խանջյան 5 | Օգոստոս 16-18 |
| **ՀՀ Արմավիրի մարզ** | | | |
| **11.** | Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան | ք. Էջմիածին, Զոբանքարայի խճուղի | Օգոստոս 21 |
| **12.** | Երևանի Ռ. Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի սովորողների և նրանց ծնողների հետ հանդիպում | ք. Երևան, Մաշտոցի 11 | Նոյեմբերի 2-րդ տասնօրյակ |